

**Ուսանողների գնահատականը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կողմից կազմակերպված
մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ /2014-15 ուս. տարի/**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ԻՄ «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա», «Հայոց լեզու և գրականություն», ինչպես նաև «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտությունների երրորդ կուրսի ուսանողների համար, 2014-15 ուս. տարվա ձմեռային արձակուրդի ընթացքում, ըստ ուսումնական պլանի նախատեսված էր չորս շաբաթյա մանկավարժական պրակտիկա, որն անց է կացվել մարզի տարբեր դպրոցներում, ըստ բուհի հետ կնքած պայմանագրի և նախապես պայմանավորվածության: Կրթական գործընթացի մի բաղադրիչ, ինչը նախ կարևոր է ապագա մանկավարժների ինքնավերլուծության, ինքնաստուգման և ինքնագնահատման համար: Մյուս կողմից պրակտիկայի կազմակերպման և անցկացման պատասխանատուներին այն թույլ է տալիս ստուգելու ուսումնական տարիների ընթացքում ուսանողների կողմից ձեռք բերված գիտելիքների և հըմտությունների գործնական կիրառման արդյունավետությունը: Գործատուների համար այն հիանալի հնարավորություն է նախապես ծանոթանալու ու գնահատելու իրենց կադրային ռեսուրսի՝ ապագա մասնագետների կարողությունները: Այդ նպատակներով մասնաճյուղի Ուսումնամեթոդական վարչության ՄԿՊԿ բաժնի և Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից, պրակտիկայից հետո անց է կացվել հարցում, պարզելու համար, թե ուսանողները որքանով են բավարարված նրա տարբեր կողմերից ու արդյունքներից:

Մանկավարժական պրակտիկային մասնակցել են երրորդ կուրսի 44 ուսանող, որոնցից 11-ը՝ Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա մասնագիտությունից, 24-ը՝ Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունից, իսկ 9-ը՝ Մանկավարժություն և հոգեբանությունից: Բերենք որոշ տվյալներ հարցման արդյունքներից:

Աղյուսակ 1-ում բերված են պրակտիկայի անցկացման տարբեր բաղադրիչներից ուսանողների բավարարվածության գնահատականները:

Աղյուսակ 1.

Թիվ	Հարցի բովանդակությունը	Միջ.գն.	ԿՄՖ	ՀԼԳ	ՄՀ
1	Որքանով Ձեզ բավարարեց պրակտիկայի կազմակերպման գործընթացը	4,66	4,91	4,79	4,00
2	Որքանով Ձեզ բավարարեց պրակտիկայի անցկացման վայրը	4,73	4,73	4,88	4,33
3	Որքանով է նպատակահարմար պրակտիկայի անցկացման ժամանակահատվածը	3,89	4,73	3,96	2,67
4	Որքանով է Ձեզ բավարարում պրակտիկայի տևողությունը	3,43	4,09	3,67	2,00
5	Որքանով է պրակտիկայի ծրագիրն իրականացվում	4,25	4,73	4,42	3,22
6	Որքանով Ձեզ բավարարեց ընդունող կազմակերպության աջակցությունը պրակտիկայի ընթացքում	4,61	4,73	4,83	3,89

Ինչպես տեսնում ենք պրակտիկայի անցկացման ժամանակահատվածի և տևողության գնահատականները որակապես տարբերվում են մյուս բաղադրիչների գնահատականներից: Նրա բովանդակային այն մասով, թե ինչպես է այն կազմակերպվում, որտեղ, համապատասխան

ծրագիրը որքանով է իրականացվում և ընդունող կազմակերպությունը որքանով է աջակցում, ուսանողները շատ ավելի բարձր են գնահատում /4,25-4,73 բալ/, քան՝ պրակտիկայի տևողությունը /3,43 բալ/ և նրա անցկացման ժամանակահատվածը /3,89բալ/: Հատկանշական է, որ պրակտիկայի կազմակերպման գործընթացից ուսանողների և գործատուների գնահատականները գրեթե նույնական են՝ /4,66 և 4,70՝ համապատասխանաբար/: Պրակտիկայի տևողության և անցկացման ժամանակահատվածի գնահատականները ավելի «խիստ» են Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության ուսանողության կողմից՝ /2,00 և 2,67՝ համապատասխանաբար/:

Կարծում ենք արդարացի կլինի, որ նման գնահատականն արժանանա ուշադրության ուսումնական գործընթացի կազմակերպման պատասխանատուների կողմից: Այստեղ պարտադիր պետք է հաշվի առնվեն ուսման կազմակերպման կանոնադրային պահանջները, դրանց շրջանակում մասնաճյուղում իրականացվող ուսումնական գործընթացների յուրահատկությունները, սահմանային գոտում ուսանողության անձնական և ընտանեկան կյանքի ինքնատիպությունը:

Շահախնդիր քննարկումն ու վերլուծությունը թույլ կտա բացահայտել պրակտիկայի տևողությունն ու անցկացման ժամանակահատվածը փոխելու գործնական հնարավորությունը, այդ փոփոխությունից օբյեկտիվորեն ստացվելիք ուսումնական «շահույթը», ինչպես նաև ուսանողության սուբյեկտիվ կարծիքի, բավարարվածության հիմնավորվածությունն ու, որպես հետևանք՝ փոխադարձ շահերի համապատասխանեցման արդյունավետությունը:

Այստեղ դրական հոգեբանական հիմք և գործոն է պրակտիկայի կազմակերպման գործընթացից բավարարվածության փոխադարձ բարձր, գրեթե բարձրագույն գնահատականները՝ 5-բալանի սանդղակով՝ /գործատուներ՝ 4,70; ուսանողներ՝ 4,66/: Էլ ավելի բարձր են բուհի և պրակտիկայի վայրից նշանակված պրակտիկայի ղեկավարի աշխատանքների, ղեկավարների կողմից ուսանողների հանդեպ ցուցաբերած վստահության գնահատականները /բոլոր մասնագիտությունների գծով միջինացված գնահատականները՝ 4,91; 4,75; 4,89՝ համապատասխանաբար .

Աղյուսակ 2.

Թիվ	Հարցի բովանդակությունը	Միջ.գն.	ԿՄՖ	ՀԼԳ	ՄՀ
11	Գնահատեք պրակտիկայի ղեկավարի աշխատանքները	4,91	5,00	4,88	4,89
12	Գնահատեք պրակտիկայի վայրի կողմից նշանակված ղեկավարի աշխատանքները	4,75	4,82	4,83	4,44
13	Որքա՞ն էր պրակտիկայի ղեկավարը վստահում Ձեզ	4,89	5,00	4,88	4,78

Նույն համատեքստում են նաև Աղյուսակ 3-ի և Աղյուսակ 4-ի տվյալները /տես աղյուսակները/: Աղյուսակ 3-ում արտացոլված են պրակտիկայի անցկացման համար ուսումնառության ընթացքում յուրացրած մեթոդների օժանդակությունից բավարարվածության աստիճանը /4,61/ և պրակտիկայի ընթացքում նոր մեթոդների յուրացումից գոհունակության մակարդակը /4,39/: Նույնը մասնագիտական հմտությունների և կարողությունների դրսևորման /4,52/ և նոր կարողությունների ու հմտությունների ձեռքբերման /4,70/ մասին /Աղյուսակ 4/:

Աղյուսակ 3.

Թիվ	Հարցի բովանդակությունը	Միջ.գն.	ԿՄՖ	ՀԼԳ	ՄՀ
9	Որքանո՞վ էր ուսումնառության ընթացքում յուրացրած մեթոդները նպաստում պրակտիկայի անցկացմանը	4,61	4,73	4,67	4,33
10	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց նոր մեթոդների յուրացմանը	4,39	4,73	4,38	4,00

Աղյուսակ 4.

Թիվ	Հարցի բովանդակությունը	Միջ.գն.	ԿՄՖ	ՀԼԳ	ՄՀ
8	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց մասնագիտական կարողությունների և հմտությունների դրսևորմանը	4,52	4,55	4,67	4,11
14	Գնահատե՞ք պրակտիկայի ընթացում նոր հմտությունների և կարողությունների ձեռք բերման Ձեր ջանքերը	4,70	4,82	4,83	4,22

Ուրիշ խոսքով համապատասխան մասնագիտությունների գծով մանկավարժական պրակտիկայի անցկացման ոլորտում բուհի և գործատուների միջև ձևավորվել է պատշաճ համագործակցության մթնոլորտ, ինչի արդյունքում, ըստ հարցման արդյունքների դրսևորվել է տվյալ գործընթացից փոխադարձ գոհունակության բարձր աստիճան:

Աղյուսակ 5-ում բերված են պրակտիկայից ուսանողների սպասումների իրականացման գնահատականները:

Աղյուսակ 5.

Թիվ	Հարցի բովանդակությունը	Միջ.գն.	ԿՄՖ	ՀԼԳ	ՄՀ
15	Որքանո՞վ արդարացվեցին Ձեր ակնկալիքները պրակտիկայից	4,25	4,55	4,46	3,33

Այստեղ ևս մյուս երկու մասնագիտությունների համեմատաբար բարձր բավարարվածության ֆոնին /4,55; 4,46 համապատասխանաբար/, մասնագիտություններ, որոնք հանրապետությունում շատ ավելի են կայացած և համբավվող, այսինքն է գառնում «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության պրակտիկանների դժգոհությունը /3,33 բալ/: Մի կողմից պատճառ կարող է լինել պրակտիկայի անցկացման ժամանակահատվածից և տևողությունից արտահայտած վերոնշյալ դժգոհությունը: Մեկ ուրիշ պատճառ կարող է դառնալ մյուս մասնագիտությունների համեմատ հոգեբանի մասնագիտության «արտասովորության», յուրահատկությունների հետ լիարժեքորեն հաշվի նստելու կողմերի համեմատական անկարողությունը, անփորձությունը: Որպես առավելապես աննյութական երևույթների աշխարհ, տվյալ դժգոհությունը կարող է կապված լինել ապագա հոգեբանների անձի ինքնատիպ բնույթի, «աշխարհիկ կյանքի» պահանջներին ավելի դժվար հարմարվելու խնդիրների հետ և...այլն: Այս ամենից հետևությունն այն է, թե տվյալ երևույթը պետք է դառնա հատուկ քննարկման և ավելի համարժեք հետազոտման առարկա:

Այսպիսով մանկավարժական պրակտիկայից տվյալ բնույթի երեք մասնագիտությունների գծով 2014/15 ուս. տարվա երրորդ կուրսի ուսանողների բավարարվածությանը նվիրված հարցումների արդյունքները վկայում են այն մասին, թե.

- Ընդհանուր առմամբ, մանկավարժական ուղղվածությամբ մասնագիտությունների գծով, հատկապես «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա», «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությունների կտրվածքով ուսումնական պլանով նախատեսված մանկավարժական պրակտիկան երրորդ կուրսի ուսանողների համար անց է կացվում արդյունավետորեն, ինչը հիմնավորվում է պրակտիկայի գործընթացներից փոխադարձ սուբյեկտիվ բավարարվածության բարձր մակարդակով;
- Ուսումնական պրակտիկայի կազմակերպման առանձին բաղադրիչներից աչքի է զառնում «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության պրակտիկանտ ուսանողների որոշակիորեն ընդգծված դժգոհությունը, ինչը պահանջում է հատուկ ուշադրություն:

Ելնելով ասվածից առաջարկվում է.

- հարցման արդյունքները, շահախնդիր բոլոր կողմերի մասնակցությամբ քննարկել համապատասխան ֆակուլտետներում և ամբիոններում;
- Հատուկ քննարկման ու վերլուծության առարկա դարձնել «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության մանկավարժական պրակտիկայի խնդիրը;
- Քննարկման արդյունքում շահախնդիր կողմերի առաջարկությունների հիման վրա կազմակերպել տվյալ մասնագիտության մանկավարժական պրակտիկայի ավելի խորը հետազոտում, ինչը թույլ կտա որոշակի առաջարկություններ կատարել այն ավելի արդյունավետորեն անցկացնելու համար:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին

18.04.2015թ.